Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 61 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

1. Ծրագրի նպատակը	Նպաստել Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տնտեսական զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և պարենի անբավարարության կրճատմանը՝ տարբեր ճյուղերում գործունեություն ծավալող ֆիզիկական և շահույթ չհետապնդող իրավաբանական անձանց իրենց նախաձեռնություններում օժանդակության ցուցաբերմամբ և այլ ծրագրերի իրականացմամբ: Օգնություն ցուցաբերել հասարակության սոցիալապես անապահով, կարիքավոր և խոցելի խմբերի անդամներին: Նպաստել շահառուների սոցիալ-տնտեսական, զբաղվածության, կրթական, մշակութային և այլ ընթացիկ խնդիրների կարգավորմանը: Աջակցել անապահով և կարիքավոր հասարակության անդամներին, որը կնպաստի մարդկանց բարեկեցիկ ապագայի կերտմանը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարումների գծով, օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործը	Ֆրանսիայի հայկական հիմնադրամ: Հասցե՝ Ֆրանսիա 75660 Փարիզ (14) Բե Պե 12 (էլ. հասցե՝ info@fondsarmenien.org), (բարեգործի կողմից նվիրաբերվող գումարները, ինչպես նախկինում փոխանցվելու են նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով): Ոչ առևտրային կազմակերպություններ և անհատ բարերարներ:
4. Ծրագիրը կատարողը	«ՀիմնաՏավուշ» Զարգացման հիմնադրամ (ՀՎՀՀ՝ 02600539)

	քաղ. Երևան, Մաշտոց 5 ա , բնակարան 11
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, սոցիալական
6. Ծրագրի բյուջեն	4,620,000,000 դրամ
7. Բարեգործություն ստացողը	«ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի շահառուները, հասարակության սոցիալապես անապահով, կարիքավոր և խոցելի խմբերը, Լեռնային Ղարաբաղից տեղահանվածները և Հայաստանի Հանրապետության տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող ֆիզիկական և շահույթ չհետապնդող իրավաբանական անձինք, բնակչությունը
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականից հունվարի 20-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սոցիալական աջակցությանն ուղղված միջոցառումներ, որոնք կատարվելու են 2024-2028 թվականներին: 1. Պարենի, կաթի և կաթնամթերքի, ձեռքբերում, ներմուծում, անհատույց տրամադրում՝ 189,000,000 դրամ: 2. Տնկիների, սածիլների, սերմերի, սերմնացուների, ֆերմենտների, պարարտանյութերի ձեռքբերում, ներմուծում, անհատույց տրամադրում՝ 1,260,000,000 դրամ: 3. Հագուստի, համազգեստի, անհրաժեշտ պարագաների, գույքի, գործիքների, արտադրական և այլ սարքավորումների, տրանսպորտային միջոցների, վերականգնվող էներգակիր սարքավորումների և դրանց պահեստամասերի, բարեգործական բեռնարկղերի, ջերմոցների ձեռքբերում, ներմուծում և անհատույց տրամադրում՝ 1,356,600,000 դրամ: 4. Շինարարական աշխատանքների, նորոգումների և հիմնանորոգումների իրականացում, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, անհատույց տրամադրում, տեխնիկայի վարձակալություն և անհատույց տրամադրում՝ 924,000,000 դրամ: 5. Սոցիալական միջոցառումների կազմակերպում, հետազոտական, կրթական, խորհրդատվական ծառայություններ՝ 294,000,000 դրամ: 6. Կազմակերպչական և չնախատեսված ծախսեր՝ 596,400,000 դրամ:

	Ընդամենը՝ 4,620,000,000 դրամ
10. Ձեռք բերվող ապրանքների (ներմուծվող) ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները , դրամ	1. Պարենային ապրանքների ձեռքբերում՝ 126,000,000 դրամ: 2. Պարենային ապրանքների ներմուծում՝ 63,000,000 դրամ: 3. Հագուստի, համազգեստի ձեռքբերում՝ 21,000,000 դրամ: 4. Հագուստի, համազգեստի ներմուծում՝ 42,000,000 դրամ: 5. Շինարարական աշխատանքների, նորոգումների և հիմնանորոգումների իրականացման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ 504,000,000 դրամ: 6. Շինարարական աշխատանքների, նորոգումների և հիմնանորոգումների իրականացման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ներմուծում՝ 336,000,000 դրամ: 7. Կաթի և կաթնամթերքի ձեռքբերում՝ 252,000,000 դրամ: 8. Անհրաժեշտ պարագաների, գույքի, գործիքների, սարքավորումների ձեռքբերում՝ 210,000,000 դրամ 9. Անհրաժեշտ պարագաների, գույքի, գործիքների, սարքավորումների ներմուծում՝ 210,000,000 դրամ: 10. Տրանսպորտային միջոցների ձեռքբերում, վերանորոգում (մեկ բեռնատար)՝ 12,600,000 դրամ: 11. Տրանսպորտային միջոցների ներմուծում (մեկ բեռնատար)՝ 21,000,000 դրամ: 12. Տեխնիկայի վարձակալություն՝ 84,000,000 դրամ: 13. Վերականգնվող էներգակիր սարքավորումների, դրանց պահեստամասերի ձեռքբերում և շահագործման ծախսեր՝ 63,000,000 դրամ: 14. Վերականգնվող էներգակիր սարքավորումների, դրանց պահեստամասերի ներմուծում՝ 147,000,000 դրամ: 15. Սոցիալական միջոցառումների կազմակերպում՝ 126,000,000 դրամ: 16. Բարեգործական բեռնարկղերի ներմուծում՝ 210,000,000 դրամ:

	17. Ջերմոցների և անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, կառուցում՝ 63,000,000 դրամ: 18. Ջերմոցների և անհրաժեշտ նյութերի ներմուծում՝ 231,000,000 դրամ: 19. Տնկիների, սածիլների, սերմերի, սերմնացուների, ֆերմենտների, պարարտանյութերի ձեռքբերում՝ 840,000,000 դրամ: 20. Տնկիների, սածիլների, սերմերի, սերմնացուների, ֆերմենտների, պարարտանյութերի ներմուծում՝ 168,000,000 դրամ: 21. Արտադրական սարքավորումների ձեռքբերում՝ 21,000,000 դրամ: 22. Արտադրական սարքավորումների ներմուծում՝ 105,000,000 դրամ: 23. Հետազոտական, կրթական, խորհրդատվական ծառայություններ՝ 168,000,000 դրամ: 24. Գրասենյակային և տրանսպորտային ծախսեր՝ 63,000,000 դրամ: 25. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 21,000,000 դրամ: 26. Կոմունալ վճարումներ՝ 10,500,000 դրամ: 27. Տարածքի վարձակալություն՝ 12,600,000 դրամ: Ընդամենը՝ 4,130,700,000 դրամ
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	1. Գրասենյակային և տրանսպորտային ծախսեր՝ 63,000,000 դրամ: 2. Աշխատավարձ՝ 336,000,000 դրամ: 3. Աուդիտորական ծախսեր՝ 21,000,000 դրամ: 4. Կոմունալ վճարումներ՝ 10,500,000 դրամ: 5. Տարածքի վարձակալություն՝ 12,600,000 դրամ: 6. Գործուղման ծախսեր՝ 27,300,000 դրամ: 7. Չնախատեսված ծախսեր՝ 126, 000,000 դրամ: Ընդամենը՝ 596,400,000 դրամ
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ մարզպետարանների աշխատակազմեր, տեղական ինքնակառավարման մարմիններ

ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«ՀիմնաՏավուշ» Զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ